ԿԱՐԾԻՔ

Անուշ Ավետիքի Հայությունյանի «Ադրբեջանի ժողովրդական ու խորհրդային հանրապետությունների ստեղծումը եւ ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.» Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի առկա ասպիրանտ Անուշ Ավետիքի Հայությունյանի «Ադրբեջանի ժողովրդական ու խորհրդային հանրապետությունների ստեղծումը եւ ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.» թեկնածուական ատենախոսությունը (գիտական ղեկավար՝ պատմ. գիտությունների դոկտոր Ալեքսան Հակոբյան) վերաբերվում է չափազանց արդիական մի խնդրի, որպիսին ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացն է 20-րդ դարի առաջին կեսին: Աշխատանքը բաղկացած է Ներածությունից, չորս գլխից, Եզրակացությունից, Օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկից ու Հավելվածից: Ամբողջ բնագիրը կազմում է 196 էջ:

Հենց սկզբից հարկ է նշել, որ Ադրբեջան պետությունն իր գոյության ողջ ընթացքում պետականորեն վարել է պատմության կեղծարարության քաղաքականություն: Արդի փուլում այդ պետական գիծը ստացել է ագրեսիվ, տեղեկատվական պատերազմի բնույթ՝ ծավալապաշտական անթաքույց նկրտումներով: Պետականա- եւ էթնո-ստեղծման այն կեղծ-գիտական մոտեցումները, որոնք տիրապետող են ադրբեջանական (այդպես նաեւ թուրքական) պատմագիտության մեջ, իրենց սուր ծայրով ուղղված են ոչ միայն սեփական հանրության ապակողմնորոշելուն, այլեւ տարածաշրջանում բնիկ ժողովուրդների՝ հայերի, պարսկերների, կովկասալեզու ժողովուրդների պատմական ներկայության թուլացմանը կամ առհասարակ բացառմանը: Հիմնականում շեշտվում է տարածաշրջանում թյուրք տարի բնիկությունը, ադրբեջանական պետական ավանդների գոյությունն ու դրանց շարունակականությունը, Իրանական Ատրպատականի թյուրքախոսների հետ էթնիկ նույնության եւ երկու հանրույթների միավորման օրինականության կեղծ փաստարկումը:

Անուշ Հարությունյանի ատենախոսության Ներածության մեջ (էջ 4-17) հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, պարզաբանվում է գիտական նորույթը,

հիմնավորվում աշխատանքի գործնական նշանակությունը, տրվում են թեմայի ժամանակագրական սահմանները եւ օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը, ինչպես նաեւ քննության մեթոդաբանությունը։

Ատենախոսության առաջին գլուխը «Թյուրքալեզու մահմեդական բնակչության էթնիկ համախմբման ընթացքը Արեւելյան Այսրկովկասում 19-րդ դարում եւ 20-րդ դարի սկզբին. Համառոտ ակնարկ» վերնագրով, ունի երեք ենթագլուխ, որոնցում ժամանակագրական եւ բովանդակային տրամաբանական կապով շարադրված են նշյալ ժամանակաշրջանում թյուրքալեզու մահմեդական բնակչության էթնոհամախմբմանը խթանած գործընթացները եւ իրադարձությունները, այն է՝ գրավոր թյուրքալեզվության եւ մահմեդական մտավորականության առաջացումը, հայ-թաթարական բախումները, մահմեդական միջավայրում քաղաքական հոսանքների առաջացումը։

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Արեւելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության էթնիկ համախմբման նախադրյալների առաջացումը ռուսական կայսրության իշխանության հաստատումից հետո։ Գրավոր թյուրքալեզվությունը», համառոտ կերպով ներկայացված են Արեւելյան Այսրկովկասում 1805 թվականից սկսած ռուսական տիրապետության հաստատման հետեւանքները, երկրամասը մշակութապես պարսկական միջավայրից կտրելու՝ ցարական վարչակարգի ջանքերը եւ նոր մտավորականության առաջացումը գրավոր թյուրքալեզվության արմատավորմամբ։

Երկրորդ ենթագլխում՝ «Հայ-թաթարական բախումները եւ Արեւելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության շրջանում էթնիկական ինքնության նոր դրսեւորումները» վերնագրով, ներկայացված են հայ թաթարական բախումների պատճառները եւ հետեւանքները։ Մասնավորապես շեշտադրվել է, թե ինչ հետեւանքներ ունեցան այդ բախումները երկրամասի մահմեդական բնակչության էթնիկ ինքնության նոր դրսեւորումների ի հայտ գալու վրա։ Խոսք է գնում ընդհանուր թշնամու կերպարի ստեղծման եւ հայատյացության սկզբնավորման մասին։

Երրորդ ենթագլխում՝ «Արեւելյան Այսրկովկասի մահմեդականության շրջանում ձեւավորված քաղաքական հոսանքները եւ դրանց գաղափարախոսությունը 20-րդ դարի սկզբին». ներկայացված են առաջին քաղաքական կազմակերպությունների ստեղծման հանգամանքները, դրանց գաղափարական ուղղվածությունը, դրանց առջեւ դրված խնդիրները։ Մասնավորապես ընդգծված է, որ դրանք կրում էին ծայրահեղ ազգայնական պանիսլամիզմի ու պանթյուրքիզմի գաղափարների խոր ազդեցությունը։

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Ադրբեջանի ժողովրդական հանրապետությունը (1918-1920 թթ.)» վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում հաջորդաբար ներկայացված է Արևելյան Այսրկովկասի քաղաքական կյանքի էվոլյուցիան՝ 1917-1920 թթ.:

Առաջին ենթագլխում՝ «Այսրկովկասի մահմեդականության քաղաքական վարքագիծը 1917 թ. Փետրվարյան հեղափոխության եւ Հոկտեմբերյան հեղաշրջման պայմաններում», ներկայացված են ռուսական երկու հեղափոխությունների քաղաքական հետեւանքները Այսրկովկասում: Մասնավորապես ընդգծված է, թե ինչպես այդ իրողությունները ազդեցին երկրամասի մահմեդական մտավորականության քաղաքական առաջնահերթությունների փոփոխության վրա՝ ռուսական վարչակարգի նկատմամբ առերես հավատարմությունից մինչեւ բացահայտ անջատողականություն:

Երկրորդ ենթագլխում՝ «Ադրբեջանի ժողովրդական հանրապետության ստեղծումը եւ Բաքվի գրավումը Օսմանյան Թուրքիայի բանակի կողմից», բավականին մանրամասնորեն ներկայացված են Ադրբեջան անվամբ պետության ստեղծման աշխարհաքաղաքական հանգամանքները, խնդիրը դիտարկված է ժամանակի պատմա-քաղաքական իրողությունների համատեքստում: Հեղինակն ընդգծել է նաեւ Արեւելյան Այսրկովկասը՝ այս երկրամասի համար ոչ տիպական «Ադրբեջան» անվամբ կոչելու Օսմանյան կայսրության քաղաքական նպատակադրումը, ինչպես նաեւ Բաքվին տիրելու կարեւորությունը տարածաշրջանային ուժերի համար:

Երրորդ ենթագլխում՝ «Բաքվի անգլիական օկուպացիան: Անկախության ճգնաժամը» վերնագրով, ներկայացված են այս նոր՝ Ադրբեջան պետության գոյության հանգամանքները անգլիական վերահսկողության շրջանում եւ դրա դադարից հետո: Փորձ է արվել նաեւ ներկայացնել, թե այս պետական կազմավորումը որքանով էր կենսունակ՝ դիմակայելու արտաքին եւ ներքին վտանգներին:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Ադրբեջանի խորհրդային հանրապետությունը 1920-1930-ական թթ.», բաղկացած է երկու ենթագլխից: Առաջինում, որի վերնագիրն է «Ադրբեջանի խորհրդայնացման ընթացքը», ներկայացված է Ադրբեջանի խորհրդայնացումը 1920 թ. ապրիլին, ընդ որում հեղինակը կատարել է նաեւ մի շարք կարեւոր հարցադրումներ՝ փորձելով ներկայացնել հնարավորինս հստակ մեկնաբանություններ, ինչպես օրինակ, ինչո՞ւ պահպանվեց Ադրբեջանը որպես անկախ

պետություն, ո՞րն էր Ադրբեջանի ռազմավարական նշանակությունը Ռուսաստանի խորհրդային իշխանության համար։

Երկրորդ ենթագլխում՝ «Հակախորհրդային դրսևորումներն Ադրբեջանում 1920-1930-ական թթ.» վերնագրով, ատենախոսն ուսումնասիրել է խորհրդային իշխանության դեմ տեղի ունեցած շարժումները 1920-1930-ական թթ.։ Դրանց պատճառները եւ ընթացքը լուսաբանելիս հեղինակն օգտագործել է մեծաքանակ արխիվային փաստաթղթեր, որոնք լիովին նոր լույս են սփռում 1920-1930-ական թթ. խորհրդային Ադրբեջանի իրողությունների վրա։

Ատենախոսության վերջին չորրորդ գլուխը, որի վերնագիրն է «Ադրբեջանցի էթնոսի կազմավորման գործընթացը 1920-1930-ական թթ.», բաղկացած է երկու ենթագլխից։ Առաջինում «Ադրբեջանի բնակչությունը եւ խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը 1920-ական թթ.» վերնագրով, ներկայացված է խորհրդային Ադրբեջանի բնակչության էթնիկ կազմը ըստ խորհրդային առաջին մարդահամարների, ինչպես նաեւ խորհրդային իշխանության ազգային քաղաքականության գլխավոր բնութագրիչները։ Մասնավորապես, խոսքը 1920-ական թթ. «կորենիզացիայի» քաղաքականության մասին է, որի էությունն էր ամեն մի վարչա-քաղաքական միավորում տիտղոսակիր էթնոսի ստեղծումը։ Նման գործընթացները բնականաբար չէին շրջանցում նաեւ խորհրդային Ադրբեջանը։

Երկրորդ ենթագլխում «Ադրբեջանցի էթնոսի կազմավորման ընթացքը 1920-1930-ական թթ.», հանգամանալից ներկայացված են այն արտաքին ու ներքին քաղաքական գործընթացները, որոնք հանգեցրին 1930-ական թթ. վերջին «ադրբեջանցի» անվան պետականորեն ամրագրմանը, որպես խորհրդային Ադրբեջանի թյուրքալեզու մահմեդական հանրույթի ընդհանրական անվանում։

Եզրակացություններում հեղինակը պատշաճորեն ամփոփել է ատենախոսության հիմնական դրույթները եւ եզրահանգումները։ Հավելվածում նա փորձել է կիրառել խորհրդային ազգագրագետ Միխաիլ Կրյուկովի՝ էթնոգոյացման բանաձեւումները՝ համապատասխանեցնելով դրանք քննարկվող ադրբեջանական թեմային։

Ատենախոսության մասին մեր հիմնական դիտողությունները հետեւյալն են.

1. Գուցե կարելի էր պակաս մոդոնիզացնել եզրութաբանությունը։

2. Մեր կարծիքով՝ ադրբեջանցի էթնոսի կազմավորումը դեռ հիմա էլ ավարտված չէ եւ շարունակվում է։

3. Էթնոգենեզի սկիզբը, մեր կարծիքով, կապված է լոկ խորհրդայնացման հետ։

Հարկ է նշել, սակայն, որ այս դիտողությունները չեն նսեմացնում կատարված ծավալուն աշխատանքի արժեքը:

Ատենախոս Անուշ Հարությունյանը իրապես կատարել է ծավալուն եւ որակյալ գիտական հետազոտություն, որը, անշուշտ, նոր խոսք է հայաստանյան աղբրեջանագիտության մեջ: Այն համապատասխանում է Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությանը եւ լիովին բավարարում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար անհրաժեշտ պահանջներին: Ատենախոսի հրապարակած գիտական հոդվածները եւ սեղմագիրը համապատասխանում են ուսումնասիրության բովանդակությանն ու հիմնական դրույթներին: Այս առումով կցանկանայինք նշել նաեւ ատենախոսության ղեկավար Ալեքսան Հակոբյանի եւ ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի գիտական կոլեկտիվի շահեկան ներդրումը տվյալ թեմատիկայի մշակման եւ հաջող իրականացման գործում:

Ըստ այսմ, մենք միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդին ներկայացված ատենախոսության հեղինակ Անուշ Ավետիքի Հարությունյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան Է.00.02 – «Համաշխարհային պատմություն» մասնագիտության գծով:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պ. գ. թ. Գրիգորի Այվազյան

Պատմական գիտ. թեկնածու Գ. Գ. Այվազյանի ստորագրությունը հաստատում եմ.
ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի
գիտական քարտուղար, պ. գ. թ. Ա. Բաբաջանյան

11.12.2023 թ.